Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

Հոդված 11. Քրեակատարողական ծառայության պաշտոններին համապատասխանող կոչումները

Քրեակատարողական ծառայության պաշտոնների համար սահմանվում են հետևյալ առավելագույն կոչումները.

1) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-14-Ն)***

2) քրեակատարողական ծառայության գլխավոր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության պետ, քրեակատարողական հիմնարկի պետ, քրեակատարողական ծառայության բաժնի պետ՝ արդարադատության գնդապետ,

բ. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի պատասխանատու հերթապահ, քրեակատարողական ծառայության բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության բաժանմունքի պետ՝ արդարադատության փոխգնդապետ.

3) քրեակատարողական ծառայության առաջատար խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության գլխավոր մասնագետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության ավագ օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի պետ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետ, քրեակատարողական հիմնարկի տեղամասի պետ՝ արդարադատության փոխգնդապետ,

բ. քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի բաժնի պետի տեղակալ, քրեակատարողական հիմնարկի բաժանմունքի պետ, քրեակատարողական հիմնարկի խմբի ղեկավար, քրեակատարողական հիմնարկի գլխավոր մասնագետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի ավագ օպերլիազոր՝ արդարադատության մայոր.

4) քրեակատարողական ծառայության միջին խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության առաջատար մասնագետ, քրեակատարողական ծառայության առաջին կարգի մասնագետ, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի ավագ օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժնի օպերլիազոր, քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի վարչության տարածքային բաժանմունքի օպերլիազոր, քրեակատարողական հիմնարկի առաջատար մասնագետ, քրեակատարողական հիմնարկի առաջին կարգի մասնագետ՝ արդարադատության մայոր.

5) քրեակատարողական ծառայության կրտսեր խմբի պաշտոններ՝

ա. քրեակատարողական ծառայության երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական ծառայության երրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երկրորդ կարգի մասնագետ, քրեակատարողական հիմնարկի երրորդ կարգի մասնագետ՝ արդարադատության ավագ ենթասպա,

բ. քրեակատարողական հիմնարկի կրտսեր մասնագետ՝ արդարադատության ենթասպա:

(11-րդ հոդվածը խմբ. 17.11.09 ՀՕ-218-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-282-Ն, 21.01.20 ՀՕ-14-Ն)